

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/7**

**18 նոյեմբերի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի 22.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Գորիսի ՏՀՏ պետի 30.09.2014 թ-ի թիվ 235 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ Գորիսի տարածքային հարկային տեսչության պետը 2014 թ-ի սեպտեմբերի 30-ին ընդունել է «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու վերաբերյալ» թիվ 235 որոշումը, ինչի հիմքում դրվել է հարկային պարտավորությունների չկատարման փաստերը: Մինչդեռ, հարկային արտոնությունների տրամադրման ժամանակ 76.000 դրամ վճարվել է հարկային մարմնի աշխատակիցը բանավոր տեղեկացրել է, որ հարկային պարտավորությունները զրոյացվել են: Նշված գումարի վճարման անդորրագիրը չի վերցվել, ինչի համար այն չի կարող որպես ապացույց ներկայացվել: Նշված փաստը կարող են հաստատել տվյալ ժամանակահատվածում հարկային մարմնում աշխատող պատասխանատու աշխատողները:

Գանգատաբերը հարկ է համարում նշել նաև, որ հարկային մարմինը երբեք չի ծանուցել հարկային պարտավորությունների մասին և այդ հանգամանքը հաստատում է հարկային արտոնությունների տրամադրման ժամանակ իր կողմից 76.000 դրամը վճարված լինելու հանգամանքը:

Հ ՖՆ Գորիսի ՏՀՏ պետի 30.09.2014 թ-ի թիվ 235 որոշման մեջ նշված պահանջներն առարկվում են նաև այն հիմքով, որ դրա մասին գանգատաբերն իմացել է բողոքարկվող վարչական ակտը ստանալուց հետո, այդ իսկ պատճառով երեք տարուց առաջ հաշվարկված հարկային պարտավորությունների նկատմամբ կիրառելի են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի դրույթները:

Ինչ վերաբերում է վերջին երեք տարվա հաշվարկներին, ապա սույն գանգատը բավարարվելուց հետո հարկային մարմինը նշված 76.000 դրամը հաշվի առնելով պետք է վերահաշվարկի հարկման ենթակա վճարները և նոր հաշվարկով պահանջ ներկայացնի գանգատաբերին:

Որպես սույն գանգատի իրավական հիմքեր բերված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի, 70-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի, 72-րդ հոդվածի, 76 հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է բավարարել գանգատը և անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Գորիսի ՏՀՏ պետի 2014 թ-ի սեպտեմբերի 30-ին ընդունված թիվ 235 որոշումը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Գորիսի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 30.09.2014 թ-ին ընդունել է թիվ 235 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 30.09.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 339.700 դրամ, որը ենթակա գանձման:

Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի չկատարված հարկային պարտավորություններն առաջացել են ներկայացված հաշվարկներից, սոցիալական ապահովության վճարի գումարները ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժերից և ստուգման ակտերով առաջադրված պարտավորություններից: Մասնավորապես, 12.484 դրամն առաջացել է 30.08.2006 թ-ին կազմված թիվ 2308159 ստուգման ակտից, 171.313 դրամն առաջացել է սոցիալական ապահովության վճարների գծով ներկայացված հաշվարկներից (այդ թվում՝ ապառք 75.437 դրամ, տույժ 95.876 դրամ), 150.000 դրամը 08.10.2007 թ-ի թիվ 2313014 ստուգման ակտից (ՀԴՄ տուգանք), իսկ եկամտահարկի գծով հաշվարկված 5902 դրամը՝ 2013 թ-ի օգոստոսից մինչև 2014 թ-ի օգոստոս ամիսը ներկայացված հաշվարկներից:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները, ինչպես նաև սույն գործում առկա ապացույցները հիմնավորում են Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված լինելու հանգամանքը:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ հարկային արտոնությունների տրամադրման ժամանակ վճարվել է 76.000 դրամ, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ քննարկման ընթացքում գանգատաբերի կողմից չներկայացվեց որևէ հիմնավոր ապացույց նշված գումարը վճարված լինելու վերաբերյալ: Նման ապացույցի առկայության պարագայում հնարավոր կլիներ միայն ճշտել, թե վճարված գումարը հարկային պարտավորությունների հաշվարկման ժամանակ հարկային մարմնի կողմից հաշվի առնվել է, թե ոչ:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդումներին, որ երեք տարուց առաջ հաշվարկված հարկային պարտավորությունների նկատմամբ կիրառելի են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի դրույթները, ապա հարկ է նշել, որ նշված պնդումները հիմնավոր չեն, քանի որ վերոգրյալ պարտավորություններն առաջացման իսկ օրվանից հաշվարկվել են Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի անձնական հաշվի քարտերում: Այսինքն, Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի չկատարված պարտավորությունները հարկային մարմնի կողմից ոչ թե նոր են հայտնաբերվել, այլ՝ հայտնի են եղել դրանց առաջացման իսկ օրվանից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Գորիսի ՏՀՏ պետի 30.09.2014 թ-ի թիվ 235 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

  
  
Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ